ՄՈՍԿՎԱՅԻ Մ.Վ.ԼՈՄՈՆՈՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՆ ԿԻՑ Ա.Հ.ԵՐԻՑՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ГИМНАЗИЯ ИМЕНИ А.Г.ЕРИЦЯНА ПРИ ФИЛИАЛЕ МОСКОВСКОГО
ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ М.В.ЛОМОНОСОВА

✉ ՀՀ, ք. Երևան, 0070, Վարդանանց 17շ. ☎ +374 11 900111 (114) Email: School@msu.am

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԹԵՍՏԻ ՆՄՈՒՇՈՐԻՆԱԿ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ (IX դասարան)

ՀԱՐԳԵԼԻ ՛ԴԻՄՈՐԴ

Ընդունելության թեստը բաղկացած է 10 առաջադրանքից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր (ընդամենը՝ 50 միավոր):

Խնդրում ենք ուշադիր կարդալ առաջադրանքները, գրել հստակ, առանց ջնջումների:

Առաջադրանքները կատարելու համար հատկացվում է 60 րոպե:

ՄԱՂԹՈՒՄ ԵՆՔ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ1.Լրացնել բաց թողած տառերը.

Բաց__թյա, թմ__կաթաղանթ, քար__նկեց, անդա__րում, ապու__տ, վառվ__ուն, ագ__ազ, անզի__ում, սարսու__, ու__եկցորդ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2. Ընդգծել այն բաղադրյալ հատուկ անունները, որոնց բոլոր բաղադրիչները գրվում են մեծատառով.

ՄԱՐՈԿԿՈՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ՄԵԾ ՊԱՐՆԻ, ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՓՐԱՏ, ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ, ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆ, ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՑԻ, ԻՎԱՆ ԱՀԵՂ, ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3. Յուրաքանչյուր այունակից ընտրելով մեկական նախածանց և արմատ՝ կազմել վեց ածանցավոր բառ.

նախ	վերադարձ
դժ	ուսումնարան
թեր	տեղային
անդր/ա/	մեներգ
գեր	թուլակազմ
համ/ա/	ծանրամարտ

_____

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 4. Գրել դարձվածքների իմաստները.

ա/ երեսը պինդ_____

բ/ զենքը ձեռքին_____

գ/ գործը քնեցնել_____

դ/ աչքը մտնել_____

ե/ դատարկ ձեռքով_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 5. Դուրս գրել գոյականները.

Վանա լճի հարավային ափերի մոտ՝ Նարեկ գյուղից փոքր-ինչ հեռու՝ բարձրաբերձ ժայռերի այրերից մեկի առջև արձանացել էր սևասքեմ մի վանական՝ հայացքը դեպի ծովը:

_____

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 6. Կազմել տրված գոյականների հոգնակին.

պահարան_____

սպի_____

կուռք_____

օրացույց_____

ակնաբույժ_____

ձեռագիր _____

լողավազան _____

դրամատուն _____

հարսնաքույր_____

պարոն_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 7.Որոշել նշված բայերի *եղանակը, ժամանակաձևը, դեմքը, թիվը, սեռը.*

Պետք է խրատես _____

բարձացրի_____

կնորոգեմ_____
հանդիպի՛ր_____
լսեի_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 8. Ընդգծել կապերը.

ա/ Մենք այսօր առաջատար ենք շնորհիվ քո ձեռներեցության:

բ/ Շատերը լռում էին, որովհետև մեզ հետ համաձայն էին::

գ/ Խնջույքի ժամանակ Սամվելը չէր կարողանում լիասիրտ ուրախանալ::

դ/ Գայլն էլ շան պես մի արարած է, միայն վայրենի ու հալածված:

ե/ Տերևները լողում էին լճակի պարզ հայելու վրա:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 9. Կատարել շարահյուսական վերլուծություն.

ա/ ընդգծել բաղադրյալ ստորոգյալը.

Սևանը քաղցրահամ լիճ է, որը հարուստ է կենդանական աշխարհով:

բ/ ընդգծել որոշիչը.

Թաղիքե գլխարկով երկրորդ ձիավորը շարունակեց քարքարոտ ճանապարհը:

գ/ ընդգծել ուղիղ խնդիրը.

Կառավարությունն այդ տարի օգնություն հատկացրեց կարկուտից տուժածներից:

դ/ ընդգծել ձևի պարագան.

Դուք վառում եք կավե ճրագը և կռացած ներս մտնում, ծնկաչոք գնում:

ե/ ընդգծել հատկացուցիչը.

Ձին լայն կրծքով ճեղքում էր լեռնային օդի սառն ալիքները:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 10. Կազմել նախադասություն՝ չխախտելով տրված բառերի շարադասությունը:

ա/ Նա, այդ, բարերարություն, անել, հոգուտ, հայրենիք, բարօրություն:

_____

_____

բ/ Դրական, արձագանք, պարագա, նախագիծ, դառնալ, օրենք:

_____

_____

գ/ Նրանք, գաղտնի, համաձայնություն, գալ, այդ, պաշտոն, թեկնածու, հետ :

դ/ Այդտեղ, խոտ, բարձրանալ, մինչև, մենք, ուս:

ե/ Հեռավոր, քաղաք, կրակ, ավելի, պայծառանալ: